**ՀԱՆՈՒՆ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐԱԿԱՆ ԴԱՏԱՐԱՆԻ**

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ը

## 2010 ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 16-ԻՆ ՄԱԴՐԻԴՈՒՄ ՍՏՈՐԱԳՐՎԱԾ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՍՊԱՆԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԳՈՒՅՔԻ ԿՐԿՆԱԿԻ ՀԱՐԿՈՒՄԸ ԲԱՑԱՌԵԼՈՒ ԵՎ ՀԱՐԿՈՒՄԻՑ ԽՈՒՍԱՓԵԼԸ ԿԱՆԽԵԼՈՒ ՄԱՍԻՆ ԿՈՆՎԵՆՑԻԱՅՈՒՄ (ԿԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՄԲ) ԱՄՐԱԳՐՎԱԾ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՍԱՀՄԱՆԱԴՐՈՒԹՅԱՆԸ ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՐՑԸ ՈՐՈՇԵԼՈՒ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ԳՈՐԾՈՎ

Քաղ. Երեւան 24 մայիսի 2011 թվականի

Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը՝ կազմով. Վ. Հովհաննիսյանի (նախագահող), Կ. Բալայանի, Ֆ. Թոխյանի, Մ. Թոփուզյանի, Ա. Խաչատրյանի (զեկուցող), Հ. Նազարյանի, Ա. Պետրոսյանի,

համաձայն Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետի, 101-րդ հոդվածի 1-ին մասի 1-ին կետի, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 25, 38 եւ 72-րդ հոդվածների,

դռնբաց դատական նիստում գրավոր ընթացակարգով քննեց «2010 թվականի դեկտեմբերի 16-ին Մադրիդում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Իսպանիայի Թագավորության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիայում (կից արձանագրությամբ) ամրագրված պարտավորությունների՝ Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը համապատասխանության հարցը որոշելու վերաբերյալ» գործը:

Գործի քննության առիթ է հանդիսացել Հանրապետության Նախագահի՝ սահմանադրական դատարան 2011 թվականի մարտի 2-ին մուտքագրված դիմումը:

Ուսումնասիրելով սույն գործով զեկուցողի գրավոր հաղորդումը, Հանրապետության Նախագահի պաշտոնական ներկայացուցիչ՝ ՀՀ ֆինանսների նախարարի տեղակալ Ս. Կարայանի գրավոր բացատրությունը, հետազոտելով կոնվենցիան եւ գործում առկա մյուս փաստաթղթերը, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Պ Ա Ր Զ Ե Ց .**

**1.** Հայաստանի Հանրապետության եւ Իսպանիայի Թագավորության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվենցիան եւ Կոնվենցիայի անբաժանելի մասը կազմող Արձանագրությունը (այսուհետ՝ Կոնվենցիա) ստորագրվել է 2010 թվականի դեկտեմբերի 16-ին՝ Մադրիդում: Կոնվենցիայի նպատակը՝ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու հետ կապված հարաբերությունների կարգավորումն է, եւ դրանով պայմանավորված՝ միջազգային առեւտրի ու ներդրումների վրա եկամտային եւ գույքային հարկերի հետ կապված խոչընդոտների բացասական ազդեցության նվազեցումը:

**2.** Կոնվենցիայով նախատեսված է, որ այն կիրառվում է պայմանավորվող պետություններից մեկի կամ երկուսի ռեզիդենտ հանդիսացող անձանց (հոդված 1) եւ պետության կամ նրա քաղաքական ստորաբաժանումների կամ տեղական իշխանության մարմինների կողմից եկամուտների ու գույքի նկատմամբ սահմանված հարկերի նկատմամբ՝ անկախ վերջիններիս գանձման եղանակից:

Կոնվենցիան կիրառվում է՝ Հայաստանի Հանրապետությունում սահմանված շահութահարկի, եկամտահարկի եւ գույքահարկի նկատմամբ, իսկ Իսպանիայի Թագավորությունում՝ ֆիզիկական անձանցից գանձվող եկամտահարկի, ձեռնարկությունների շահութահարկի, ռեզիդենտ չհանդիսացող անձանցից գանձվող եկամտահարկի, գույքահարկի եւ եկամուտների ու գույքի նկատմամբ գանձվող տեղական հարկերի նկատմամբ:

**3.** Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը, փոխադարձության հիման վրա, ստանձնում է, մասնավորապես, հետեւյալ պարտավորությունները.

- Կոնվենցիան կիրառել շահութահարկի, եկամտահարկի եւ գույքահարկի նկատմամբ,

- կիրառել Կոնվենցիան նաեւ նույնական կամ էապես նման հարկերի նկատմամբ, որոնք կսահմանվեն Կոնվենցիայի ստորագրումից հետո՝ ի լրումն գործող հարկերի կամ դրանց փոխարեն, եւ ապահովել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմիններն իսպանական կողմի իրավասու մարմիններին ծանուցեն ՀՀ համապատասխան հարկային օրենքներում կատարված ցանկացած էական փոփոխության մասին,

- Հայաստանի Հանրապետության ձեռնարկության կողմից միջազգային փոխադրումներում նավերի, օդանավերի կամ ճանապարհային փոխադրամիջոցների շահագործումից ստացված շահույթը հարկել միայն Հայաստանի Հանրապետությունում,

- հաշվի առնելով Կոնվենցիայի 18-րդ հոդվածի 2-րդ կետի դրույթները՝ ՀՀ ռեզիդենտին նախկին վարձու աշխատանքի համար վճարվող կենսաթոշակները եւ համանման այլ վարձատրությունները հարկել միայն Հայաստանի Հանրապետությունում,

- Հայաստանի Հանրապետությանը կամ ՀՀ տարածքային կառավարման եւ տեղական ինքնակառավարման մարմիններին մատուցած ծառայությունների դիմաց անհատին վճարվող աշխատավարձը կամ համանման այլ վարձատրությունները հարկել միայն Հայաստանի Հանրապետությունում,

- չհարկել Իսպանիայի Թագավորության ռեզիդենտ հանդիսացող կամ մինչեւ Հայաստանի Հանրապետություն ժամանելը Իսպանիայի Թագավորության ռեզիդենտ հանդիսացած եւ Հայաստանի Հանրապետությունում բացառապես ուսման կամ վերապատրաստման նպատակով գտնվող ուսանողին կամ փորձնակին Հայաստանի Հանրապետությունում իր կեցության, ուսման կամ վերապատրաստման համար ստացած վճարումների առնչությամբ՝ պայմանով, որ այդ վճարումներն ստացվեն Հայաստանի Հանրապետությունից դուրս գտնվող աղբյուրներից,

- կրկնակի հարկումը բացառելու նպատակով Հայաստանի Հանրապետության ռեզիդենտի կողմից Իսպանիայի Թագավորությունում հարկվող եկամուտ ստանալիս կամ գույք տնօրինելիս թույլատրել այդ ռեզիդենտի եկամտահարկի կամ գույքահարկի նվազեցում Իսպանիայի Թագավորությունում վճարված եկամտահարկի կամ գույքահարկի գումարի չափով,

- Իսպանիայի Թագավորության քաղաքացիներին Հայաստանի Հանրապետությունում չենթարկել այլ կամ ավելի խիստ որեւէ հարկման կամ դրա հետ կապված որեւէ պարտավորության կատարման, մասնավորապես՝ կապված ռեզիդենտության

հետ, քան այն հարկումն ու դրա հետ կապված պարտավորությունների կատարումն են, որոնց, միեւնույն հանգամանքների դեպքում, ենթարկվում են կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության քաղաքացիները՝ մասնավորապես կապված բնակության վայրի հետ,

- ապահովել, որպեսզի Իսպանիայի Թագավորության ձեռնարկության փնտե-սական գործունեություն իրականացնող մշտական հաստատության հարկումը Հայաստանի Հանրապետությունում չլինի նվազ բարենպաստ, քան Հայաստանի Հանրապետության համանման գործունեություն իրականացնող ձեռնարկությունների հարկումը,

- Հայաստանի Հանրապետության ձեռնարկությունները, որոնց կապիտալն ամբողջությամբ կամ մասամբ, ուղղակիորեն կամ անուղղակիորեն փնօրինվում կամ վերահսկվում է Իսպանիայի Թագավորության մեկ կամ մի քանի ռեզիդենտների կողմից, Հայաստանի Հանրապետությունում չենթարկել հարկման կամ դրա հետ կապված պարտավորությունների կատարման, որոնք տարբերվում են կամ ավելի ծանր են, քան այն հարկումը եւ պահանջներն են, որոնց ենթարկվում կամ կարող են ենթարկվել Հայաստանի Հանրապետության այլ համանման ձեռնարկու-թյունները,

- երաշխավորել, որպեսզի Հայաստանի Հանրապետության իրավասու մարմինները տրամադրեն Իսպանիայի Թագավորության իրավասու մարմիններին այնպիսի տեղեկություններ, որոնք կարեւոր են սույն Կոնվենցիայի իրականացման կամ Հայաստանի Հանրապետության կամ ՀՀ տարածքային կառավարման եւ տեղա-կան ինքնակառավարման մարմինների կողմից կիրառվող ցանկացած տեսակի եւ բնույթի հարկերի մասով ՀՀ օրենքների կատարման կամ կիրարկման հետ այնքանով, որքանով դրանցով սահմանված հարկումը չի հակասում Կոնվենցիային,

- երաշխավորել, որ ստացված ցանկացած տեղեկություն կհամարվի գաղտնի, եւ կհրապարակվի միայն այն անձանց կամ լիազոր մարմիններին, որոնք առնչվում են Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 1-ին կետում նշված հարկերի գնահատմանը կամ հավաքմանը, հարկադիր հավաքմանը կամ դրանց առնչությամբ դատական հետապնդմանը, կամ դրանց հետ կապված բողոքարկումների քննարկմանը կամ վերահսկմանը, ինչպես նաեւ այն, որ այդպիսի անձինք կամ մարմինները տեղեկությունները կօգտագործեն միայն այդպիսի նպատակների համար:

**4.** Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետությունը կրում է ֆինանսական պարտավորություններ, ինչը պայմանավորված է այն հանգամանքով, որ Հայաստանի

Հանրապետությունը պարտավորվում է չհարկել Իսպանիայի Թագավորության ռեզիդենտների կողմից Հայաստանի Հանրապետությունում ստացված առանձին տեսակի եկամուտները կամ հարկել նվազեցված դրույքաչափով: Կոնվենցիան ամրագրում է նաեւ հարկումից խուսափելը կանխելու հետ կապված փոխհամաձայնեցման ընթացակարգ, ինչպես նաեւ երաշխավորում է Հայաստանի Հանրապետությունում եւ Իսպանիայի Թագավորությունում հարկման կամ դրա հետ կապված որեւէ պարտավորության կատարման բնագավառում անձանց նկատմամբ որեւէ խտրականության բացառում:

**5.** Միջազգային իրավունքի նորմերին ներդաշնակ՝ Կոնվենցիայի գործողությունը չի տարածվում դիվանագիտական ներկայացուցչությունների եւ հյուպատոսական հիմնարկների անդամների նկատմամբ:

**6.** Կոնվենցիայով Հայաստանի Հանրապետության ստանձնած պարտավորու-թյունները համահունչ են ՀՀ Սահմանադրության 8-րդ եւ 9-րդ հոդվածների դրույթներին, կոչված են զարգացնելու կողմերի միջեւ բարիդրացիական, փոխշահավետ հարաբերությունները, նաեւ ստեղծելու իրավական բարենպաստ պայմաններ կողմերի համապատասխան սուբյեկտների տնտեսական գործու-նեության ազատության համար:

Ելնելով գործի քննության արդյունքներից եւ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 100-րդ հոդվածի 2-րդ կետով, 102-րդ հոդվածի առաջին եւ չորրորդ մասերով, «Սահմանադրական դատարանի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 63, 64 եւ 72-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության սահմանադրական դատարանը **Ո Ր Ո Շ Ե Ց.**

**1.** 2010 թվականի դեկտեմբերի 16-ին Մադրիդում ստորագրված՝ Հայաստանի Հանրապետության եւ Իսպանիայի Թագավորության միջեւ եկամուտների եւ գույքի կրկնակի հարկումը բացառելու եւ հարկումից խուսափելը կանխելու մասին կոնվեն-ցիայում (կից արձանագրությամբ) ամրագրված պարտավորությունները համապատասխանում են Հայաստանի Հանրապետության Սահմանադրությանը:

**2.** Հայաստանի Հանրապետության Սահմանադրության 102-րդ հոդվածի երկրորդ մասի համաձայն սույն որոշումը վերջնական է եւ ուժի մեջ է մտնում հրապարակման պահից:

**ՆԱԽԱԳԱՀՈՂ** **Գ. ՀԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ**

24 մայիսի 2011 թվականի
ՍԴՈ-962